ՆՈՐ-ԴԱՐ

№ 109 ՏԱՖՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ. աբաթ 22 Յունիսի 1896 Հ. աբաթ 22 Յունիսի ՏԱՖՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 109

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ.
ամիսը՝ 1 բ., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամերով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., երկրամների համար կրկնապատիկ։

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԵՐԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՋՈՒԹԻՒՆԸ

ընտրութեան ժողովներին նախապատրաստելու կարգադրութեամբ, պատիւ ունի ծանուցանելու ի գիտութիւն երկրորդ կարգի պ.պ. փոխանորդների, որ յունիսի 16-ին լիազօրների ընտրութեան համար սկսուած նիստի շարունակութիւնը նշանակուած է շաբաթ, յունիսի 22-ին երեկոյեան ն ժամը 7-ին, Թիֆլիսի ժողովարանի գահլիճում։

(655) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կիրակին ի՞նչպէս պէտք է անցկացնել։

Քրոնիկոն.—Վահան վարդ. Հրաժարականը։ Կալուած. հարկը հաս. հասատութիւններից։ Անհատ ապահովական դպրոցները Սիբիրում. Պատուասիր հարիւրամեակը։ Ազն. բանկի ընհ. ժողովը։ Մամուլի զրպարտութիւն։ Արհեստաւորների ապագի աշխատանքները։ Համաուսական ցուցահանդէս։ Մի նոր օրէնք։ Սպանութիւններ Բազուի նահանգում։ Մի գաղտավճիռ։ Նոր ատեացուած գիրք։ Ջուշուց։ Սիմֆերոպոլից։ Միրվից։

Բանուորները Բալախանում և նրանց կառավարիչները։

Մի փոքրիկ դիտողութիւն «Արարատ»-ին։

Մի համեստ առաջադրութիւն հայ հարուստներին։

Քաղաքական տեսութիւն։

Քաղաքական.—Թրքական գործեր։

Խառնուրդ։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

ԿԻՐԱԿԻՆ Ի՞ՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԱՆՑԿԱՑՆԵԼ

Գիտութիւնն էլ իւր corsi-ն ու ricorsi-ն ունի, ասել է Վիկոն, այնինքն գիտութեան մէջ պատահում են այնպիսի երևոյթներ, որոնք նման են ծովի մակընթացութեան և տեղատուութեան, ունենում է իւր մոգան։ Այնպիսի երևոյթներ, որոնք մի ժամանակ մարդկանց մտքերը լրջօրէն զրաղեցրել է, յանկարծ ուշադրութեան անարժան երևոյթ է նրկատւում և անուշադրութեան մատնւում։ Սակայն անցնում է մի ժամանակ և այդ երևոյթը նորից ընդհանուրի ուշադրութեան արժանի է համարւում։

Եթէ այդ բանը պատահում է գիտութեան մէջ, ապա ուրի՛ւ ևս պիտի պատահի կեանքի մէջ, ուր գործողները ոչ ամենաբնաիր խելքի տէր անհատներ են և ոչ գործունէութեան ընտրեալ ճիւղին անձնուէր ճշմարտութիւն որոնողներ։ Մանաւանդ որ շատ անգամ կեանքը ստանում է սխալ ուղղութիւն մի կամ միքանի հիւանդ ուղեղների և ապականուած սրտերի սրած ագիտացիայի շնորհիւ։

Օրինակների եաևից գնալու կարևորութիւն չկայ, մեզանից իւրաքանչիւրը կարող է նոյն իսկ իւր կեանքից բազմաթիւ օրինակներ բերել։ Այսօր հասարակութիւնը Քրիստոսին ովսաննա է գոռում, վաղը նրան խաչելու և միւս օրը պարձեալ երկինք հանելու, պաշտելու համար։ Կար մի ժամանակ, որ վհուկների գոյութիւնը, հմայութիւնը ճանաչուած էր որպէս մի անհերքելի ճշմարտութիւն, բայց 1782 թուից յետոյ, երբ ինկվիզիցիայի վերջին խարոյկի վրայ Գլարուսում այրուեց վերջին վհուկ կինը, այդ գաղափարը վերացաւ և վհուկութիւնը նախապաշարմունք էր համարւում, սակայն վերջին տարիներս գործ ենք ունենում վերանորոգւում է վհուկների գոյութեան գաղափարը՝ միայն ուրիշ անուններով — հիպնոտիզմ, մեսմերիզմ, կենսական հեղուկ և այլն։

Սակայն ինչ հարկ կայ այդպիսի երևոյթներ օրինակներ առաջ բերել։ Նոյն իսկ կիրակին սուրբ պահելու գաղափարը միթէ միևնոյն օրում չէ՞ եղել քրիստոնէութեան նախնի դարերում և յետոյ, ուրի՛ւ ուշ, կիրակին Աստուծոյ նուիրուած օր էր համարւում և ամենախիստ կերպով սուրբ պահւում։ Սակայն «ազատամտիների» շնորհիւ կիրակին էլ, թէև աչ բոլորովին, հասարակ օրերին։ Անցաւ էլի մի շրջան և այժմ արդէն կիրակին սուրբ պահելու գաղափարն արծարծւում է ուրի՛ւ կերպով և ամեն շրջաններում միայն ուրիշ անունով մարդուս հանգստութիւն տալու անհրաժեշտութեան անունով։

Եւ յիրաւի, ինչքա՜ն անհրաժեշտ պայման է հանգստութիւնը. ինչպէս քունը յաջորդում է արթնութեան, միևնոյն կերպով աշխատանքն ու հանգիստը պիտի փոխանակին իրարու։ Ոչ մի ֆիզիքական կարողութիւն չկայ շարունակ աշխատելու։ Ջարթուցայ վեց օրուայ շարունակ աշխատանքից յետոյ կիրակնօրեայ հանգիստը մի տեսակ փրկութիւն է։ Ինչու՞ այդ հանգիստը կիրակի օր կատարուի և ոչ մի ուրիշ օր—դա ուրիշ խնդիր է, բայց նոյնպէս ոչ զուրկ կարևորութիւնից եթէ ի նկատի առնենք, որ հանգստի համար ամենքի համար միևնոյն օրը նշանակելը, բացի կրօնականից, ունի նաև տնտեսական, բազմատեսակ շահերի ընդհարումը մեղմացնելու նպատակ։

Սակայն ինչ պէտք է հոսկանայ կիրակնօրեայ հանգիստ ասելով. միթէ դատարկապորութիւն, միթէ լոկ կրօնական զրաղմունքներ, միթէ բարեգործութիւն, միթէ անձնական զուարճութիւններ. ... Հրէան շաբաթը սուրբ է պահում. նա այդ օրը կրակ չէ վառում, կերակուր չէ եփում, կար չէ անում, ճանապարհ չէ գնում, կրակի լոկ ձևրք իսկ չէ տալիս (նոյն իսկ ծխախոտ չէ ծխում և շատերը, նոյն իսկ, ճրագ չեն վառում՝ գործ չլինելու համար), մի խօսքով կատարեալ պարապութիւն.—նա նոր շաբթը հագած ապրում է և գրօսնում միայն։ Մահմեդականը նոյնպէս սուրբ է պահում իւր օրը—ուրբաթը, բայց նա բացի աղօթքներից ուրիշ գործերով էլ զբաղւում։

Մենք ինչպէս պէտք է պահենք կիրակին։

Գուցէ ոչ մի ազգ այնպէս խիստ չէ պահում կիրակին, ինչպէս անգլիացիները։ Բայց այժմ անգլիացիների մէջ էլ կիրակի օրուայ «սրբութիւնը» խախտւում է կամաց-կամաց. սակայն այդ կատարւում է աստիճանաբար և դէպի լաւը։ Այդ խնդրի մասին ռուսաց թերթերում հաղորդում են բաւական հետաքրքիր տեղեկութիւններ, որը մենք քաղուածօրէն առաջ կբերենք։

Դեռ սրանից 10—15 տարի առաջ ճանապարհորդի համար կիրակին ամենատաղտկալի օրն էր համարւում Լոնդոնում, ուր օտարներին համար այնքան բան կայ տեսնելու։ Բայց կիրակի օրն ամենայն ինչ փակուած է. այդ օրը կրօնի օր է, Աստծու օր է—ժողովուրդը օրական 3—4 անգամ եկեղեցի էր գնում, որից զատ ժամերն կրօնական գրքեր, առաւելապէս Աստուածաշունչ է կարդում. այդ օրը հիւր գնալ չէր լինել, իսկ եթէ գնային էլ պէտք է խոսակցէին ցած ձայնով, այն էլ կրօնական խնդիրների մասին. գործիքների վրայ ածել արգիլուած էր, ինչպէս և ֆիզիքական խաղեր, ազմուկ, բարձր ծիծաղ, կատակներ. մինչև անգամ կրօնական օրհներգութիւնները եկեղեցում կարելի էր միայն երգել, իսկ տանը կատարեալ լռութիւն պէտք է տիրէր։ Փողոցներում զբօսնել, քաղաքից դուրս անմեղ զբօսանքի գնալ—ծաղր էր համարում կիրակի օրուայ սրբութեան դէմ։ Ջատկանիայում այժմ էլ կիրակի օրերը երկաթուղային գնացքները, որ սովորական օրերը 10—20 անգամ շրջան են անում, ուղևորում, կիրակի օրերը հազիւ են երկու անգամ միայն դուրս գալիս կայարանից, իսկ չորեքշաբթի և բոլորովին դադարում են գործելուց։

Բայց կիրակնօրեայ այն սրբութիւնը կամաց-կամաց խանգարւում է, մանաւանդ բարձր և միջին դասակարգի կողմից՝—այժմ արդէն կիրակի օրերը կարելի է հասարակական այգիներում երաժշտական խմբերի պատահել, փակ շինութիւնների մէջ կանգրանները են սրբւում, մարդիկ քաղաքից դուրս զբօսանքի են գնում, մուզէումներն ու պատկերների ցուցահանդէսները բացւում, ֆիզիքական խաղերի համար այդ օրը մրցում նշանակւում։ Նոյն իսկ եկեղեցիներում քարոզիչները ցոյց են տալիս առաւելապատկերներ, վիճաբանութիւններ կազմում, կոնցերտներ տալքում, հիւրասիրութիւն անում։ Օրինակ պատառը Սկոտը Ուայտչեպէլի փողոցնիում այսպիսի յայտարարութիւն է տարածում. «Եթէ կամենում էք ծխել, առաջիկայ կիրակի օրը, ժամը երեքին շնորհ բերէք եկեղեցական դահլիճը։ Թէյն ու ծխախոտը - պատրաստ է»։ Այդ եկեղեցական դահլիճը կոչւում է Christchurch-Hall և գտնւում է քաղաքի այն թաղում, ուր ամենաաղքատ և ապականուած ժողովուրդն է ապրում, որին եկեղեցի հրապուրելու միակ միջոցը ծխախոտն ու թէյն է համարւում։ Եւ յիրաւի, այդ յայտարարութեան վերայ հաւաքւում են մօտ 250 հոգի մեծ մասամբ տգամարդիկ, աղքատ հագնուած, ողորմելի կերպարարքով։ Ժամը երեքին ինքը պատարը, ծխամորճը բերանին սկսում է ամեն մէկին ծխախոտ հրամցրնել. իւրաքանչիւր որ երկու երեք անգամ ծխելու բաւական ծխախոտ է ստանում։ Սկսում են ծխել։ Այնուհետև պատարը ծխամորճը հանում է բերանից. նա կարդում է մի աղօթք, որից յետոյ մի օրհներգութիւն երգում են կանայք, պատահում է, որ կանանցից մէկին ու մէկը մինակ է երգում և ծափահարութիւններով վարձատրւում։ Ապա պատարը աւետարան է կարդում ու քարոզ խօսում, որից յետոյ թէյ է տրւում։

Կիրակի օրերն այժմ յաճախ կարելի է տեսնել բազմամբոխ բանուորների խմբեր, որոնք երաժշտական խմբի նուագածութեամբ ընթանում են փողոց փողոց և ժողովարարութիւն անում յօգուտ հիւանդանոցի, ապաստանարանի, գործադուլ անող բանուորների և այլն։ Միևնոյն կերպով կատարւում են նաև քաղաքական ցոյցեր, տեղի են ունենում դասախօսութիւններ, կոնցերտներ և այլն։

Այդ բանին միջոցէս նպաստում են մի քանի մանաւանդ ընկերութիւններ, որոնք յատուկ նպատակ ունին կիրակի օրը նուագ կրօնական գործելու։ Այդ ընկերութիւններից մէկը դեռ 1856 թուից է հիմնուած և իւր ծրագրի մէջ մտցրած է կիրակնօրեայ կոնցերտ, երաժշտութիւն պարկերում, փոքրիկ ուղևորութիւններ, գեղարուեստային ցուցահանդէսների այցելութիւն, և այլն։ Եւ այդ ընկերութիւնը բաւական էլ աջողութիւն է ունեցել,—նա կարողացել է գեղարուեստական թանգարաններ ունեցող մասնաւոր անձանց համոզել, որ իրենց տան դռները կիրակի օրերը բացուին ընկերութեան անդամների առաջ, միևնոյն կերպով զանազան նկարչական ընկերութիւնների տարեկան ցուցահանդէսները մտաչելի է դարձել ընկերութեան անդամների համար կիրակի օրերը։ Պէտք է իմանալ, որ Անգլիայում կայ մի օրէնք, որով արգելւում է կիրակի օրերը վճարով հասարակական հանդէսներ կազմել։ Միևնոյն կերպով այդ ընկերութիւնն աջողեցրել է զանազան երկաթուղային ընկերութիւններից արտօնեալ տոմսեր ստանալ իւր անդամների համար, Անգլիայում, նոյն իսկ արտասահմանում փոքրիկ ուղևորութիւններ կատարելու նպատակով,—դրանք շաբաթ օրը դուրս են գալիս և երկուշաբթի առաւօտեան նորից վերադառնում։

Կայ մի ուրիշ ընկերութիւն էլ, որ 1869 թ. է հիմնուած և յատուկ նպատակ ունի կիրակնօրեայ դասախօսութիւնները տարածելու։

Բայց պէտք է այս էլ իմանալ, որ Անգլիայում կան նաև այնպիսի ընկերութիւններ, որոնց յատուկ նպատակն է կիրակի օրը բոլորովին սուրբ պահելու ջանք անել։ Դրանցից ամենազօրեղը Lord's Day Observance Society-ն է, որ օգոստոսով 1781 թ. հրատարակուած այն օրէնքով, որի մասին վերևը յիշեցինք, այն է, կիրակի օրերը արգելւում է առևտրական նպատակով զուարճացուցիչ ներկայացումներ կազմել, դադարում է մատնում այն ամենին, որոնք մուտքը վճարով դասախօսութիւն, թատրոնական ներկայացում, կոնցերտ և այլ հանդէսներ կըկազմեն։ Վերջին անգամ այդ ընկերութիւնը դատի է մատնել Լիդօի կիրակնօրեայ դասախօսութիւնների ընկերութեանը և դատը տարել էր. սակայն պատասխանները մեղադրեալներին յանդգնութիւն ճանաչելով հանդերձ որոշել էին, թէ «հարկաւոր է այդ յօդուածը փոխել»։

Եւ յիրաւի, այդ խնդիրը մի քանի անգամ յարուցուած է նոյն իսկ Անգլիայի օրէնսդրական ժողովներում և այս տարի, մարտի 10-ին, պատգամաւորների ժողովը որոշել էր, որ Լոնդոնի ազգային մուզէումներն ու նկարչական գալերէաները պէտք է կիրակի օրերն էլ բայց միայն այս պայմանով, որ դրանց մէջ «ծառայողներից ոչ ոք չարթնական վեց օրուանից աւելի չծառայէ և նրանցից իւրաքանչիւրն ազատ կիրակնօրեայ աշխատանքից յետ կանգնելու, եթէ դա իւր համոզմունքներին հակառակ է»։

Այս բանը պէտք է մի նշանաւոր քայլ համարել կիրակի օրն աւելի օգտակար և զուարճալի դարձնելու համար, որից հետև դեռ 1882 թուին նոյն այդ պարլամենտը միևնոյն խնդիրը մերժել էր 125 ձայնի առաւելութեամբ, 1891 թ. մերժել էր 127 ձայնի առաւելութեամբ, իսկ այս տարի ընդունել 85 ձայնի առաւելութեամբ։

Սակայն դեռ Անգլիան շատ երկար տարիներ պիտի սպասէ, որ կարողանայ լիովին ազատօրէն գործադրել կիրակի օրը իւր հոգեկան զուարճութիւններին, մտաւոր կարիքներին բաւականութիւն տալու համար։

Կիրակի օրը հանգստեան օր է. բայց միթէ դա նշանակում է թէ կատարեալ դատարկութիւն կամ լոկ կրօնական օր է։ Ոչ։ Մեզ օրուայ մտաւոր կամ ֆիզիքական ծանր աշխատանքից յետոյ ինչու մարդ չպիտի կարող լինի մի օր էլ լիովին ազատ զգալ իրեն և վայելել Աստուծոյ բարիքները։ Ի հարկ է, այդ օրը Աստուածային է, բայց ինչո՞վ ենք մեղանչում Աստուծոյ դէմ, եթէ այն օրը մի-երկու ժամ եկեղեցում անցկացնելուց յետոյ—մի երկու ժամ էլ քաղաքից դուրս մաքուր օդի մէջ ընկերական շրջանում անցոք—ուրախ կեանք վարենք, երեկոյեան թատրոն, կոնցերտ, դասախօսութեան գնանք, կամ մեր գիտացած ձևով բարեգործութիւն անենք։ Ինչու՞ եկեղեցին պէտք է բռնութեամբ այդ օրն ամբողջովին մեզանից խլէ։

Եւ բարեբաղդաբար մեր եկեղեցին կատարեալ ազատութիւն է տալիս իւր անդամներին։

Բայց ինչպէ՞ս ենք օգտւում մենք այդ ազատութիւնից։

Միհրան.

ՔՐՈՆԻԿՈՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Արժան։ Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանը նորին Վեհափառութեանը հրաժարական է ներկայացրել վանքի գանձապետութիւնից։ Պէտք է այդ առթիւ նկատենք, որ արժ. հայրը յայտնի է որպէս հասատատուն համոզումների տէր մի մարդ և անաղարտ անուն ունի, այնպիսի յատկութիւններ, որոնք այնքան պակասում են ներկայիս «լոյս տալ» սիրող սերնդի մէջ։ Սակայն ժամանակիս «լոյս տուղներինն» է և «համոզմունք, սկզբունք» և ուրիշ այսպիսի «մոռացուած հնութիւններ» արդարև ատելութեան կարգն են անցնում։ Ցաւալի, որ արժանապատիւ հօր յաջորդը կրկարողանայ իւր նախորդի չափով ընթանալ։

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ հարց է բարձրացած յօգուտ հիւանդանոցների, ուսումնարանների և գանազան բարեգործական հիմնարկութիւնների նուիրուած կալուածներից հողային հարկի վճարման մասին։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը մտադիր է արևելեան և արևմտեան Սիբիրում մի քանի միջնակարգ և տարրին անաստապահութեան գպրոցներ հիմնելու, անաստապահութեան գործն աւելի առաջ տանելու նպատակով։

—

Նոյեմբերը ամսին ժողովրդի առողջապահութիւնը պահպանող ընկերութիւնը

ասդանդաւորներ եւ ասդանդաւորուհիներ։

—

Ընտանեկան տխուր դէպք մը պատահած է Ֆրանսիոյ Ռուան քաղաքին մէջ։ Ֆրանսիական «Ռուան» լրագրին կը գրեն հետեւեալը։

Ռուանի մէջ ապրող 20-ին տարեկան երիտասարդ մը 141 ֆրանկ 40 սանթիմ տալով կը գնէ հրացան մը, որ ինքնասպանութեան համար կ՚ուզէ գործածել։ Ան կը գնայ իր ծնողաց տունը, կը մտնէ իր սենեակը, կը գրէ նամակ մը, կը կնքէ զայն եւ կը դնէ սեղանին վրայ։ Ապա կը վերցնէ հրացանը, կը դնէ ճակատին վրայ եւ կը պայթեցնէ։ Գնդակը կ՚անցնի գանկին միջէն եւ կը դիպչի պատին։ Ինքնասպանը կը մնայ ողջ։ Ան կը վերցնէ հրացանը եւ կը սկսի զայն ուրիշ անգամ գործածել, երբ հայրը կը մտնէ սենեակը եւ կը խլէ հրացանը։

Ինքնասպանը կը տարուի հիւանդանոց, ուր կը գտնուի մինչեւ 16-ը, երբ վիրաբոյժները կ՚որոշեն գնդակը հանել։ Վիրահատութիւնը կը կատարուի եւ կը յաջողի։ Հիւանդը կը սկսի առողջանալ։

Ֆրանսական օրէնքներուն համաձայն, ինքնասպանութեան փորձ կատարողը կը ենթարկուի քրէական հետապնդման։ Ուստի ոստիկանութիւնը կը հետաքննէ գործը։ Ան կը պարզէ, որ ինքնասպանը ոչ մէկ պատճառ ունեցած է իր արարքը գործադրելու համար։ Ան ինքնասպանութեան փորձ կատարած է միայն այն պատճառով, որ ծնողքը չէ ուզած իրեն հրացան գնել։

—

Ֆրանսական «Ֆիգարօ» լրագրին կը գրեն հետեւեալը։

Ֆրանսիոյ Ազգային ժողովի անդամ Ժան Ռիշարը, որ ամուսնացած է Ռուսիոյ կայսերական արքունիքի նախկին պալատական տիկնոջ մը հետ, որ Ռուսիոյ մեծ դքսուհիներէն մէկուն ընկերուհին էր, ուզած է իր կնոջ ծնողքին հետ հաշտուիլ։ Ան կը գրէ անոնց, կը խնդրէ, որ իրեն թոյլ տան իրենց տեսնել։ Ան կը գրէ, որ ինքը ամուսնացած է միայն քաղաքական նկատումներով, որ ինքը կը սիրէ իր կինը, որ ինքը կը պատուէ զայն, որ ինքը կը ցաւի, որ իր կինը ստիպուած է ապրիլ հեռու իր ծնողքէն, որ ինքը կը ցաւի, որ իր կինը ստիպուած է ապրիլ հեռու իր հայրենիքէն։ Ան կը գրէ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Հեռագիր-թղթ)

— Ըստ օրուս «Köln. Zeit.»-ի տեղեկութեանց, որ դիմել է մարտական միջոցներու եւ մարմնական պատիժներու դէմ, «մարտական միջոցներ» ըսելով՝ ոչ միայն զէնքերու գործածութիւնը, այլ նաեւ ամէն տեսակ ուժի գործադրութիւնը, որ կրնայ վնասուածքներ պատճառել, ինչպէս՝ ծեծ, հարուածներ, ձեռնաշղթայ դնել, ոտքերը կապել, ստիպել որ մարդ ծունկի գայ, ստիպել որ մարդ ձեռքերը վեր պահէ, ստիպել որ մարդ ոտքի կանգնի, ստիպել որ մարդ ոտքերը կամ ձեռքերը լայն տարածէ, ստիպել որ մարդ ձեռքերը ետեւ դնէ, ստիպել որ մարդ ոտքերը միասին դնէ, ստիպել որ մարդ ոտքերը միասին դնէ եւ ձեռքերը վեր պահէ, ստիպել որ մարդ ոտքերը միասին դնէ եւ ձեռքերը վեր պահէ եւ ետեւ ծալէ, ստիպել որ մարդ ոտքերը միասին դնէ եւ ձեռքերը վեր պահէ եւ ետեւ ծալէ եւ ետեւ ծալուած ձեռքերը ոտքերուն միացնէ, ստիպել որ մարդ ոտքերը միասին դնէ եւ ձեռքերը վեր պահէ եւ ետեւ ծալէ եւ ետեւ ծալուած ձեռքերը ոտքերուն միացն

Կրետէն խաղաղեցնելու համար պետութիւնների առաջարկած միջոցները ներկայացուած են մինիստրների խորհրդին սուլթանին հաստատել տալու համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիայի հոգերը.— Անգլիայում չտեսնուած հոգեր են լինում. այս օրերս Լոնդոնում մահուան միքանի դէպքեր պատահեցան արեգակի հարուածից։ Անգլիայի արեւտեան ափում, նաւաստիներին թոյլատրուած է հագնել այն հոլերը, որ հագնում են միմիայն արեւադարձային երկրներում։

—

Բելգիացի կանանց նուէրը պապին. Բելգիացի մի խումբ տիկիններ ընծայեցին Լեոն XIII պապին իրենց երկարամեայ և ծանր աշխատանքի *արգիւնքը*—մի սահագին ու մեծագին ասեղնագործ գորգ։ Գորգը, որ գեղարուեստական մի աջողելի ձեռագործ է ներկայացնում, կարուած է 16 տարուայ ընթացքում և բռնում է 154 քառակուսի մետր տարածութիւն։ Պապը հիացած այդ հրաշալի ձեռագործից՝ շնորհակալութեան ինքնագիր մի նամակ է ուղարկել նուիրատու տիկիններին։ Գորգի վրայ 2,800,000 ասեղնակար կայ։

—

Լեոն XIII պապի ամբարձուցը.— Վատիկանի պարկում պապի յատուկ ցանկութեամբ կառուցուած է մի չքեղ պուրլիճոն, ուր ամառուայ տօթերին պապը զովութիւն ու հանգիստ է վայելում։ Պապի պարտէզն այնքան ընդարձակ է, որ նրա որսորդները իրենց տերոջ համար լաւ պարէն են ընծայում պարտիզում վխտացող թռչուններից։ Լեոն XIII պապը մի շատ քիչ է ուտում. նա գերադասում է որսի միսը և առհասարակ շատ հետեւ է կազմում նրա խորտակացուցակը։ Նրա համար կերակուր պատրաստելուն շատ օգնում են կաթոլիկ զեռահաս և աշագեղ միանձնուհիները. մինը կարկանդակ է պատրաստում, միւսը սրգանակ, երրորդը կանաչեղէն է քաղում և այլն։ Նրա չորերի և սպիտակեղէնի վրայ հսկիչ են նշանակուած նոյնպէս միանձնուհիներ, որոնք շատ չքեղ ու մեծագին հանգերձներ են կարում իրենց հոգևոր տերոջ համար։ Վատիկանում ծառայող բոլոր միանձնուհիները միտեսակ գղեստ են հագնում—կապտագոյն՝ երիվներով շոր, այնպէս, ինչպէս պալատական կանայք են հագնում։

—

Զարմանք բան է. — Ընայելով որ չինացիները իրրև հմուտ հաշուապէտներ են համարուում, սակայն նրանք ամենափոքր հասկացողութիւն չունին թուաբանական շորս գործողութիւնների մասին։ Ջանխայում հրատարակուող մի լրագիր ասում է, որ անցեալ տարի մի շատ հասարակ խնդիր է առաջարկուած եղել 10,000 ուսանողի, որոնցից հազիւ հազար հոգի կարողացել են մի կերպ վճռել։

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Խնդրում եմ երկտող նամակիս մի անկիւն չնորհէք պատուական «Նոր-Դար»-ի մօտակայ համարներից մինում։

Թիֆլիսի ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ գաւթում ապրում է Թիւրքիայի մի հայ կին Հաճի-Վարդուհի անունով, որ 15 տարի է ինքնագլուխ եկել է Կովկաս և ահա 9-րդ տարին է ապրում է Թիֆլիսում։ Այդ կինը պարապում է լուացք և բժշկութիւն աննկով և առանում է շաբաթական 3 բուրլուց ոչ պակաս։ Թիֆլիսեցիներից շատերը ճանաչում են այդ կարճահասակ, շատախօս կնոջը։ Հաճի-Վարդուհին, որ բացի իրանից կարող է ուրիշին կերակրել, որ մտնում է զանազան գինետները, ծախսում է փողերը, և արբած բազուկով դուրս է գալիս գինետներից՝ այդպիսին առանում է «2րի ճաշարանից» ամեն օր տաք կերակուր, հաց ձրիարար, և ապրում է ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ սեննակներից մինում նոյնպէս ձրի։ Մեղ պարտականութիւն ենք համարում «Նոր-Դար»-ի միջոցաւ զգուշացնել հիւանդ կանանց ինքնակոչ, վնասակար հոգիմներից, որոնք բացի մեծամեծ վնասներ տալուց ուրիշ ոչ մի օգուտ չեն կարող տալ. ուշքի ենք հրաւիրում և ձրի ճաշարանի վարչութիւնը քաղց տաք կերակուր բաժանէ ճշմարիտ քաղցածներին ու ոչ մի կտոր հացի կտրօններին. նրանց, որոնք տարին տասներկու ամիս մի ուման տաք կերակրի կարօտ են մնում և ամաչում են դիմելու հաց խնդրելու... Ընտրեհետև պիտի ասենք որ հայ եկեղեցու սեննակներից հարկաւոր է տալ ձրի այն մարդկանց, որոնք մնացել են փողոցներում առանց որևէ միջոցի անուէր ու անտուն, և ոչ Հաճի-Վարդուհիներին։ Էլ մի քանի անգամ ս. Հրեշտակապետաց եկեղեցու երեսփոխը աշխատել է դուրս հանել սեննակից յիշեալ կնոջը և տալ սեննակը պանդուխտներին՝ չէ յաջողուել այդ, որովհետև խոստացել է կամ դուրս գալ, կամ քրէի վճարել, որ երկուսն ևս չէ կատարել մինչ օրս։

Բլըջեան։

Թիֆլիս, 18 յունիսի։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարզատար № 1 գնացքը Բաքուից Թիֆլիս դուրս է գնում ցերեկուայ 2 ժ. 30 ր., Թիֆլիս հասնում է առաւօտեան 8 ժ. 21 ր.։ Թիֆլիսից Բաթում դուրս է գնում առաւօտեան 9 ժ. 30 ր., Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր.։

Մարդատար № 3 գնացքը Բագուից Թիֆլիս դուրս է գնում պիշերուայ 11 ժ. 5 ր., Թիֆլիս հասնում է երեկոյեան 5 ժ. 50 ր., Թիֆլիսից Բաթում դուրս է նում բեկ գ ոյեան 6 ժ. 50 ր., Բաթում հասնում է առաւօտեան 8 ժ. 15 ր.։

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում առաւօտեան 9 ժ. 40 ր., Թիֆլիս հասնում է երեկոեան 9 ժ. 55ր., Թիֆլիսից Բագու դուրս է գնում գիշերուայ 10 ժ.50 ր.,Բագու հասնում է ցերեկուայ 4 ժ. 40 ր.

Մարդատար № 4 գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ 11 ժ. 0 ր., Թիֆլիս հասնում է ցերեկուայ 12 ժ. 25 ր.։ Թիֆլիսից Բագու դուրս է նում ցերեկուայ 1 ժ. 10 ր. Բագու հասգնում է առաւօտեան7 ժ. 30 ր.։

Մարդատար № 7 գնացքը Թիֆլիսից Բորժոմ դուրս է գնում ցերեկուայ 3 ժ. Բորժոմ հասնում էերեկոյեան 8 ժ. 35ր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոյս առաւ

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի

ԵՐԿՍԻՐԱԿԻՒԹԻՒՆՆԵՐ Ա. ֆոպոֆ.

Գինն է 50 կոպ։

Դիմել կենդրոնական գրավաճառանոց.

(654) 2—2

Հոյս առաւ

ՎԱՉԱԳԱՆԻ

ՀԵՆՐԻԽ ՊԵՍՏԱԼՈՑԻ

ԳԻՐՔԸ

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Դիմել գրավաճառներին։ 2—2

Հոյս առաւ

ԴՐԱԴՈՐ ԲԱԼԱՍՏԵԱՆՑԻ

ԹՈՄՍՈՄ ԵՒ ՍԱԼԻՄԱՆ

ԳԻՐՔԸ

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

Դիմել գրավաճառներին։ 2—2.

(М) 32—13

ԿԵՕԼԵՐԵԱՆ
ԳՈՒՆԱՒՈՐ ՋՈՒՐ
ամէն տեսակ սիրած հոտի, ծախու կան
ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ
ասելի նշանաւոր վաճառականների մօտ։
(М.) 3—3.

ՍՄԲԱԿԻ և ԿԱՇՈՒ
ՀՄԱՐԵԼՈՒԹԻՒՆ ԻՒՂ
„ՍՊՈՐՏ“
պրծ ա ր ան ի
ծախու կայ
ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ
ասելի նշանաւոր վաճառականների մօտ։
(М.) 3—3

Հոյս առաւ
ԼՕԽՄԱՅ
պրական հանդիսի
1896 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ
(312 ԵՐԵՍ)
առեկան բաժանորդագրին է 3 ր. իւրաքանչիւր գիրքն առանձին 2ր. բացուած է *1897* թ. բաժանորդագրութիւնը, բաժանորդագրութիւնն ընդունւում է «Կիզրնեական գրավաճառանոցում»։
Հրատարակիչ՝ ԳԻՒՏ ՔԱՀ. ՂԱՆԵԱՆՑ
3—3.

Գ. Ֆ. ԼՈԿԿԻՒ
ՏԱԿՈՒԱԳՈՐԾՈՒՐՆԸ.
առաջարկւ է ամենանոր ձեւի
ԳԻՆԻ ԵՒ ՅՈՅՆՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ
Փակ դրութեամբ եւ ապակեայ տակառներ անօթներ և առհասարակ ամեն տեսակ ամաններ էքս- և էսէնցի համար։ Յատկապէս սեպհականատէրերու, պանդոկների
ՊԱՐԿԵՇՆԵՐ
չոր, հղուած կաղնի փայտից։
Պրէյսկուրանտները ուղարկւում են ձրի։
Հաւատի նամակների և հետադրների համար՝
Казань, Локке,
(М.) 24—21



Բարձր պատկարգի կանայք, ինչպէս և պ՛ղակութեամբ աճեցնում են դէմքի, ձեռքերի և մարմնի մաշկը հրաշագործական գործածելով ԿՈՑԼԴ-ԿՐԵՄ (CoId-Créme), որ պատճառում է իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տէղ նրանք գործ են ածում CREME-SIMON (Կրեմ-Սիմոն) գի պղտիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չէ փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի չնորհալութիւնն ու թարմութիւնը։
LA POUDRE SIMON (Պուդր Սիմոն) LE SAVON ALA CREME SIMON (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա պարմանալի յատկութիւնները։
I. SIMON., 13 rue Grande Bateiére, PARIS Մասամբ վաճառւում է վարսավիրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ։
(М.) 15—15

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան Վարչութիւնը յայտարարում է, որ ընկերութեան խմբագրական Մասնաժողովը որոշել է հաւաքել ժողովրդական բանահիւսութեան վերաբերեալ նիւթեր՝ ասացուածքներ զուարճախօսներ, հնչեակներ, երգեր և աւանդութիւններ (վերջինը պատմական նշանակութիւն ունեցող)։ Ուստի վարչութիւնս սիրով ձեռնհաս անձանց, առաջարկում է ուղարկել ընկերութեանը այդպիսի նիւթեր։ Ներկայացրած աշխատութիւնները հետզհետէ կը տպագրուին և որոշ վարձատրութիւն։

(653) 3—3

Ի Կոնսիստորիայի Հայոց Վրաստանի և Իմերէթիի նշանակեալ ամսուրդ ի 26 այսր յունիսի ի 12 ժամու աւուր առանց կրկնամրդի վաճառել ի վարձու կրտակս Մայր Աթոռոյ հանդերձ նկատիս, որ յԱրատ բատակի հրապարակի ուստի ցանկացողք կարեն դիմել ի կոնսիստորիս ի նշանակեալ պահուն հանդերձ գրաւականօք,

Անդամ Կոնսիստորիայի Գաբրիէլ քահ. Տէր-Գաբրիէլեան

(651) 3—3

Ի Կոնսիստորիայի Հայոց Վրաստանի և Իմերէթիի նշանակեալ ամսուրդ ի 28 այսր յունիսի ի 12 ժամու աւուր առանց կրկնամրդի վաճառել ի վարձու պատնն Մայր Աթոռոյ որ ի Կուկիայ ի Սիմօնովի փողոցի. ուստի ցանկացողք կարեն դիմել ի կոնսիստորիայն ի նշանակեալ ժամուն հանդերձ գրաւականօք։

Անդամ Կոնսիստորիայի Գաբրիէլ քահ. Տէր-Գաբրիէլեան

(652) 3—3

(М). 50—23

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՓՈՇԻ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
յատակները, գուները, առնգալքները, լուսամուտների վիպկերը, լուսամուտների տախտակները, նմանապէս և մնացեալ փայտեայ պարագաներ, ինչպիսիք են՝ սեղանները, տաշտերը և այլն, ծախու կայ ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ ասելի նշանաւոր վաճառականների մօտ։
Այս փոշու միջոցով բոլոր յիշեալ առարկաները, ինչպէս նորկուածները, այնպէս և հներկուածները, լուացւում են պրիմել առանց ջանք գործ դրուելու և ասելի էժան ու չուտ, քան որևէ ուրիշ միջոցով։
(М.) 3—3

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՀՈՏԱՒԵՏ ՋՈՒՐ
въ С.-Петербургѣ Невскій, пр., 16, въ магазинѣ «ЦЕНТРАЛЬНАЯ ПАРФЮМЕРІЯ»
въ Москвѣ, въ магазинахъ Товарищества Р. КЁЛЕРЪ и К° «Կիօլերեան հոտաւէտ ջրի» հետ ծանօթ չհղտղներին պէտք է բացատրել, որ սա ինչպէս Կիօլնի, այնպէս և ռուսական օդըկլոնի նման ջուր չէ, այլ իւր *բաղադրութեամբ* կատարելապէս ինքն յ-րոյն ջուր։ *ասելութիւններով*. շատ ամուր և մեծ քանակութեամբ հոտաւէտ նիւթեր էսպրանեակում իւր մէջ. նրա ամրացնող և թարմացնող կատարելապէս ինքնայրոյն բաղադրութիւնը պահպանում է մինչեան օր։
յս յատկութիւնների և այն բանի շնորհիւ, որ գինը համեմատաբար էժան է և հանրապատչելի, այս ջուրը խիստ տարածուած է.
Ծախու կայ ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ ասելի նշանաւոր վաճառականների մօտ։
(М.) 3—3.

ԾԾՄԲԻ ԵՒ ԱՂԻ ՄԱՔՈՒՐ ԽԻՆԻ
Կատարեալ հնարաւորութիւն է հանդիսանում իւրաքանչիւր տան համար ձեռք բերելու այս բաւական միջոցը ամենաէժան գնով ԲՈԼՈՐ ասելի նշանաւոր վաճառականների մօտ գտնուելում, որի բժշկական յատկութիւնները հետևեալ են՝
ՄԱՍԿՈՒԱՑԻ Ի. ԿԵՕԼԵՐ և ԸՆԿԵՐՈՒԹԻՆ Ը։
Անպատճառ պահանջել, որ իւրաքանչիւր տուփիկի վրայ լինի փիրմայի կնիքին ու Ընկերութեան դրօշմը և փչացած չլինի մանրամասն ցանկը, որ կրում է իւր վրայ
Товарищество (Р. К. и К°) պլոմբը։
(М.) 3—3

Тифлисъ Дов. цензурою 21-го Іюня 1896 г. Տպարան Ս. Մելիք-Ջահնազարեանցի։ Типогр А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковны дом